5072

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 110 - 25

Նախաձեռնող՝ *«Մաքուր հատիկ» ՍՊԸ*
Ք. Երևան, Էրեբունի, Խորենացի փողոց, 17 փ.

Գործունեությունը՝ *Սիսի ավազի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն*
Արարատի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 110 - 25

«07» մայիսի 2025թ.

Սիսի ավազի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մաքուր հատիկ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր

Ներածական մաս. Արարատի մարզի Սիսի ավազի հանքավայրը գտնվում է Ռանչպար գյուղից 0.8 կմ, Սիս գյուղից 1 կմ, Մեծամոր գետից՝ 200 մ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս բնակավայրի վարչական սահմանում և ներկայացված է՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողատեսքերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվում է 42.6 հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, ուսումնասիրելով օգտակար հանածոն՝ ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍՏ ԳՕՍՏ-ի և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՕՍՏ-ի և տեխնիկական պահանջների, իրականացնել տեղամասի հաշվեկշռային պաշարների հաշվարկում և երկրաբանատնտեսագիտական գնահատում:

Հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատներն ըստ Arm WGS-84 համակարգի բերված են ստորև.

	X	Y
1	4434473.000	8445547.000
2	4434732.057	8445570.071

3	4434991.032	8445593.135
4	4435259.000	8445617.000
5	4435222.791	8445919.843
6	4435187.317	8446216.530
7	4435337.535	8446319.930
8	4435232.752	8446425.008
9	4435036.478	8446286.831
10	4434847.441	8446138.039
11	4434672.062	8446005.064
12	4434494.883	8445866.068
13	4434484.655	8445725.483

Հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը ընդունվել է հիմնականում 200-300 մ սահմաններում: Հետախուզական աշխատանքներն իրականացվելու են մինչև 50 մ խորությամբ 15 հորատանցքի անցկացման միջոցով, որի ընդանուր ծավալը կկազի 750 մ:
Հորատանցքերի հորատումից ստացված հանուկի նմուշարկումը կատարվելու է հանուկի ամբողջ երկարությամբ, նմուշների սեկցիայի երկարությունը՝ 5 մ: Ընդամենը վերցվելու է 153 հանուկային նմուշ:

Օգտակար հանածոյի քիմիական և միներալոգիական կազմերը կուսումնասիրվեն 2-ական նմուշով: 2 նմուշով կիրականացվեն նաև լաբորատոր ստուգողական անալիզները: Բնամասում ավազի բնական խտության, զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար մեխանիկական եղանակով կիրականացվեն 2 հետախուզահորի անցման աշխատանքներ: Հետախուզահորերի անցման աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով: Նախատեսվում է անցնել մինչև 4 մետր խորության 2 հետախուզահոր՝ 8 գծամետր ընդհանուր ծավալով: Հետախուզահորերի չափերն են՝ 4.0մ x 2.0մ x1.5մ: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Փաստագրման աշխատանքների ծավալը նախատեսվում է հետևյալ քանակներով.

- հորատանցքերի փաստագրում՝ 750.0 մ,
- հետախուզահորերի փաստագրում՝ 8.0 գծ. մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ դաշտային պայմաններում երկու կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Հորատանցքերից վերցված 153 նմուշից 147-ը կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների, ինչպես նաև 2 նմուշ քիմիական անալիզների, 2 նմուշ հսկողական անալիզների և 2 նմուշ միներալապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար և հետախուզահորերից 2 նմուշ դաշտային պայմաններում ծավալային զանգվածի ու փխրեցման գործակցի որոշման համար:

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ նախատեսվում է, որ կառաջանա չտեսակավորված կենցաղային աղբ, ինչը հասնելու է հատուկ անթափանց տարողություններում, ապա հեռացվելու է պայմանագրի համաձայն, համայնքի հետ համաձայնեցված:

Տեղամասի տարածքում ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու:

Խմելու և տեխնիկական նպատակով ջուրը նախատեսվում է բերել Սիս բնակավայրից:

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ ընկերությունն իրականացնելու է միայն 2 հետախուզահորից հանված լեռնային զանգվածի ծավալների հետլցման աշխատանքներով, որը կկատարվի մեխանիկական եղանակով: Ընդանուր ծավալը կազմում է 24 մ^3 (8.0 մ × 2.0 մ × 1.5 մ), իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 96000 ՀՀ դրամ:

Սիսի ավազի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակութային հուշարձանների տարածքների սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Նավթամթերքները պահեստավորվելու և պահվելու են հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկով ապահովված պահեստ), ինչին տրվելու է համապատասխան թեքություն, ինչն ապահովելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

– մեքենաների տեխնիկական սպասարկումն իրականացվելու է մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա կլինեն բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,

–նախատեսվում է արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

–աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

- Նախատեսվում է օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին:

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,

- հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

-ստորգետնյա ջրերի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

-հանքի հարակից տարածքում վայրի բնության, կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

-աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է մասնահանել 250 000ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի Սիսի ավազի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ իրականացվել է հանրային լսում Արարատի մարզի Սիսի համայնքի Սիս բնակավայրում, որի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմնի, ու հանրության կողմից նախատեսվող գործունեության իրականացումը հավանություն է արժանացել: Փորձաքննական գործընթացին

մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Մասիսի համայնքապետարանը և Արարատի մարզպետարանը:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

-Գործունեությունն իրականացնելիս հողային ռեսուրսների պահպանությունն անհրաժեշտ է կատարել՝ ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի №1396-Ն և Կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

-Առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մաքուր հատիկ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Սիսի ավազի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան